ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2017 թվականի հուլիսի 20-ին կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/3 պայմանագրում 2018 թվականի հոկտեմբերի 27-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	Կապալառուի կողմից ներկայացրած գրություն:
Փոփոխության նկարագրություն	Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի երկարաձգում:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և պայմանագրի 8.4 կետ:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 4
20.07.2017թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/3 գնման պայմանագրի

ք. Երևան 27 հոկտեմբերի 2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Գազկոմշին>> ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու)՝ ի դեմս ընկերության տնօրեն Մ. Միսակյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 20.07.2017թ. ՀՀ Արմավիրի մարզի Բամբակաշատ համայնքի մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 2018 թվականի փետրվարի 16-ին կնքված N 2 համաձայնագրի հավելված N 1-ով սահմանված օրացուցային գրաֆիկի 3-րդ տողում <<31.10.2018թ.>> բառերը փոխարինել <<20.11.2018թ.>> բառերով:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	**Կապալառու՝**
ՀՀ քաղաքաշինության կոմիտե	<<Գազկոմշին>> ՍՊԸ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ	Ք. Երևան, Նոր Նորքի
կառավարական տուն 3	9-րդ զանգված, 20/53
ՀՀ ֆինանսների նախարարության	<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 11500905218000
Հ/Հ 900011012474	ՀՎՀՀ 00843968
ՀՎՀՀ 02565827	

Գլխավոր քարտուղար՝

---------- Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Տնօրեն՝

---------- Մ. Միսակյան
(ստորագրություն)
Կ.Տ.